



«ԱՐԱՐԱՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՈԱՊԵՏԻ ՀԵՏ

(Ս. Էջմիածին, 28 հոկտեմբերի 1985 թ.)

ՀԱՐՅ—Վեհափառ Տեր, Զեր գահակալության 30-ամյակին նշումը վերած վեցավ համազգային տոնախմբության: <Ետաքրքրական պիտի ըլլար իմանալ, թե Դուք անձնապես ինչպես կգնահատեք այս իրադարձությունը, ի՞նչ կպաք ի տես այս երջանիկ իրողության, ի՞նչ տրամադրություններ կհամակեն Զեկ:

ՊԱՏԱՍԽԱՆ—Ես գոհություն կուտամ Աստուծո, որ բախտն ունեցած շինարար իրագործումներ գլխավորելու իմ գահակալության երեսուն տարիներու ընթացքին, շինարար իրագործումներ՝ հոգևոր, կրթական, եկեղեցաշինական ու ազգային-հայրենասիրական իմաստով:

Ի տես այս արդյունքին, ես ինքվինքս միսիթարված կպամ, իմ պարտականությունը կատարած ըլլալու գիտակցությամբ: Եթե Տերը տակավին ինձ ժամանակ տա, պիտի կամենամ շարունակել իմ աշխատանքը նույն ոգևորությամբ: Որովհետև տակավին շատ ընելիքներ կան:

ՀԱՐՅ—Կարելի՝ է իմանալ Զեր հետագա ծրագիրներու և առաջադրությանց մասին, որոնցմե մեկն ալ, կլսենք, թե <այ Եկեղեցվո Նոր Կանոնագրության մը մշակումն է:

ՊԱՏԱՍԽԱՆ—Մայր Աթոռիս աշխատանքի հորիզոնը լայն է և, ինչպես շեշտեցի, ընելիքներ շատ կան տակավին:

Նախ իր ավարտին պետք է հասցնենք Սուրբ Գրքի աշխարհաբար թարգմանությունը, որուն ձեռնարկած ենք երեք տարի առաջ, և որուն վրա կաշխատին Երևանեն տասը գիտնական գրաքարագետներ, իհմանված հայերեն ոսկեդարյան թարգմանության վրա: Կհուսանք գործը տպագրության հանձնել քան հազար տպաքանակով 1987 թվականին: Սույն գործը կնկատեմ իմ գահակալության կոթողական իրագործումներեն մին:

<առաջիկա տարիներուն ծրագրած ենք վերանորոգումները <այաստանի գավառներու չորս-հինգ եկեղեցիներու և որոշ եկեղեցիներուն կից նոր կառուցվող հովվատուներու:

Ծրագրած ենք նաև մեր Եկեղեցին օժտել կապիմական կանոնագրությամբ մը, որ իր մեջ ընդգրկե ամբողջ՝ մեկ ու անբաժան մեր Եկեղեցվո կառուցը

իր նվիրապետական Աթոռներով և թեմական կազմակերպություններով։ Մեր նվիրապետական Աթոռներեն՝ Տանն Կիլիկիո Աթոռը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Աթոռը, ինչպես և թեմերը ունին իրենց ներքին կանոնագրությունները, և անոնք, բնական է, կմնան ի գորու իրենց շրջանակի մեջ, սակայն հույժ անհրաժեշտ կգտնենք, որ մեր Մայր Եկեղեցին օժավի նաև կազմական կանոնագրությամբ մը, ուր ճշտվին իրավասությանց սահմանները և փոխադարձ գործակցության կերպերը Աթոռներու միջև և Աթոռներու ու թեմերու միջև։

Այս նպատակավ մեր կազմած Հանձնաժողովը պատրաստեց նախնական նախագիծ մը, որ կրնա առարկան դառնալ ուսումնասիրության և վերանայման։ Այս իսկ մտածումով հրավիրեցինք Տանն Կիլիկիո Աթոռը, որ իր ներկայացուցիչները առաքե Ս. Էջմիածին՝ մեր Հանձնաժողովին հետ միասնաբար կատարելու այդ աշխատանքը։ Ուրախ ենք հայոնելու, թե վերջերս Անթիմիասեն ստացանք պատասխան, որ Տանն Կիլիկիո Աթոռը հառաջիկա հունվար ամսեն հետո պիտի ուղարկե իր ներկայացուցիչները, որոնք պիտի ներկայացնեն իրենց տեսակետները։

Մենք հույս ունինք, որ Մայր Աթոռի Հանձնաժողովը և Կիլիկյան Աթոռի պատվիրակները միասին պիտի աշխատին շինարար ոգիով, փոխադարձ փոխըմբռնումով խմբագրելու համար Հայ Եկեղեցին կազմական կանոնագրության մը վերջնական նախագիծը, որ հետագային պետք է ենթարկվի ընդհանուր քննարկման և հաստատման Եկեղեցին օրինական իշխանությանց կողմեց։

ՀԱՐՅՑ—Վեհափառ Տեր, Ձեր հայրապետության շրջանին Հայ Եկեղեցին ամբողջապես վերագուսավ իր ազգային-հոգմոր պատմական առաքելությունը և նույնիսկ գերազանցեց զայն։ Այսուհանդերձ նկատելի են սփյուռքահայ ազգային-Եկեղեցական մեր կանքի մեջ գոյատևող տիտուր կարգ մը երևույթներ։ Մայր Աթոռը ի՞նչ ընելու տրամադիր է այս ուղղությամբ։ Կարելի՞ է լավատես ըլլալ մեր մոտիկ ապագային առնչությամբ։

ՊԱՏԱՍԽԱՆ—Սփյուռքի տարածքի վրա ապրող մեր ժողովուրդը քննական է, որ իր մեջ ունենա տարբեր հոսանքներ, տարբեր խմբավորումներ և շրջանակներ, ամեն մեկը ունենալով իր կազմակերպությունը, իր մամուլը, իր հավաքագրը և այլն։

Այս իրողությունը ես կնկատեմ, այո՛, բնական և նույնիսկ ազգային կենսունակության դրսնորում և հետևաբար օգտակար, եթե այդ կազմակերպությանց միջև հակադրումները մնան ողջմության և խոհականության սահմաններու մեջ, ոգենչնչված իրավ սիրով դեպի մեր ազգն ու վերածնած մայր հայրենիքը։

Եկեղեցին, սակայն, պետք է դուրս և վեր մնա վերսիշյալ հոսանքներու և անոնց միջև հակամարտությանց մակարդակեն։ Եկեղեցին կապատկանի մեր ազգի բոլոր զավակներուն, և մեր ազգի բոլոր զավակները կապատկանին Եկեղեցին հավասարապես։ Եկեղեցին չի կրնար կողմ ըլլալ։ Հոգնորականը չի կրնար կողմ ըլլալ։ Կողմ ըլլալ կնշանակե բոլորինը չըլլալ։ Բոլոր քաղաքակիրք ժողովուրդներու ծոցին մեջ կան տարբեր տեսակի գաղափարաբախոսական հոսանքներ և երեսմն բուն պայքարներ անոնց միջև, սակայն անոնց Եկեղեցիները վեր են այդ մակարդակեն։ Ամեն կուսակցություն իր Եկեղեցին չունի։ Եկեղեցին մեկ է և անբաժան ու բոլորինը հավասարապես։ Հետևաբար սփյուռքի տարածքի վրա գործող բոլոր հայկական կազմակերպություններն ու հոսանքները կիտրիիմ, թե ողջմությունը պետք է ունենան ուղիղ հասկնալու Եկեղեցին դերը մեր ազգային կանքի մեջ և օգնելու մեջի, որ ամրապնդենք կանոնական միությու-

նոր և մեկությունը մեր Մայր Եկեղեցին, Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Եջմիածնով, որ հնարավոր միակ հիմքն է Հայ Եկեղեցվո կանոնական միության և հայ հավատացյալ ժողովուրդի միասնության, սերտ ու եղբայրական գործակցությամբը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի և Կ.Պոլս Պատրիարքությանց Հայոց Աթոռներու:

«ԱՐՅ—Վեհափառ Տեր, մեզի համար հույժ հետաքրքրական է գիտնալ, թե այսօր ի՞նչ վիճակ կպարզեն Հայ Եկեղեցի-պետություն հարաբերությունները Խորհրդային Հայաստանի մեջ:

ՊԱՏԱՍԽԱՆ—Մեր մայր Երկրի մեջ Եկեղեցի-պետություն հարաբերությունները շատոնց ի վեր հստակ են թե՛ իրավական և թե՛ իրողական առումով: Իմ երեսուն տարիներու պաշտոնավարության շրջանին ես գոհունակ սրտով հաստատած եմ այս իրավիճակը, և շնորհիվ այս իրավիճակի Մայր Աթոռու հաջողած է կյանքի կոչել այն իրագործումները, որոնք ծանոթ են մեր ժողովուրդին ի Հայաստան և արտասահման:

Ոմանք ինչ-որ սխալ հասկացողությամբ կմտահոգվին այն իրողությամբ, որ մեր Երկրի մեջ ապատ են մարդիկ հավատացյալ ըլլալու, ինչպես ուրիշներ ապատ են հավատացյալ ըլլալու և Եկեղեցի հաճախելու: Այդ մտահոգությունը արդյունք է նեղմտության և չի համապատասխաներ իրական կացության: Հավատացյալ ու ոչ հավատացյալ քաղաքացիներ Հայաստանի մեջ կապրին համերաշխ, ամեն մեկը հարգելով մյուսի համոզումները: Իսկ պետությունը տարբերություն չի դներ իր քաղաքացիներու միջև այդ տեսակետեն, որովհետև հայրենաբնակ մեր հավատացյալները հավատարիմ քաղաքացիներն են հայրենիքի և նույն եռանդով կմասնակցին Երկրի շինարար կարգացման: Հավատացյալներ և ոչ հավատացյալներ միևնույն Աստուծո որդիներն են և հեռու օր մը, վերջին դատաստանին, անոնք նժարի վրա պիտի դրվին համաձայն Երկրի վրա իրենց առաքինի և հանրօգուտ իրագործումներու:

«ԱՐՅ—Սփյուռքի մեջ կարծողներ կան, որ Մայր Աթոռը՝ հանդես գալով հօգուտ խաղաղության պաշտպանության, հեռացած կըլլա իր բո՛ն առաքելութենեն, կըբաղի իրեն չերաբերող խնդիրներով: Դուք ճիշտ կգտնե՞ք այս դիտողությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ—Ինձի համար ամեն բանե վերը՝ ապահովումն է մեր վերածնած ու վերաշինված մայր Երկրի անվտանգության, ապահովումն է մեր հայրենաբնակ Երեք միլիոն ժողովուրդի խաղաղ գոյատևման, ապահովումն է մեր ազգային մշակույթի ծաղկումի Արարատի նալիքածքի տակ:

Հայերը բոլոր Երկիրներե, ո՛ւր որ ալ բնակին, ի՞նչ գաղափարախոսական նախասիրություններ ալ ունենան, երբ խոսքը վերաբերի Հայաստանի ներկային ու ապագային, պետք է դեկավարվին այս իրամայականով: Ոչ մեկ հայ մարդ թող չմոռնա երեք յաթաղանի մահացու հարվածը 1915-ին, որ բնաշնչեց մեր ազգի կեսեն ավելին:

Եթե խաղաղամիրական մեր կոչերը ոմանք քաղաքականություն պիտի նկատեն, մենք հպարտությամբ կընդունինք այդ «Անդադրանք»-ը և մեր քրիստոնյայի և հայու պարտքը կնկատենք շարունակել մեր աղոթքը և աշխատանքը վասն խաղաղության համայն աշխարհի, վասն ընդհանուր վինաթակման և վասն համերաշխ գործակցության բոլոր մեծ ու փոքր ազգություններու: Պիտի շարունակենք աղոթել մանավանդ, որ Տերը միշտ խաղաղ ու անփորձ պահպանե մեր արդի Մայր Հայաստանը:

ՀԱՐՑ—Զեր խորիմաստ պատգամներեն մեկուն մեջ կար պարբերություն մը, որ մեծ հետաքրքրություն ստեղծած է սփյուռքի տարածքին: Այնտեղ ըսած եք, թե հայ դատին տիրություն ընել, կնշանակե նաև տեր մնալ մեր ներկային, ունեցածը ապահովել: Կը արեհաձի՞ք պարզաբանել Զեր այս միտքը:

ՊԱՏԱՍԽԱՆԱՆ—Մեր համոզումն է, որ մեր ազգային արդար իղձերու կենսագործման հիմնական տվյալը, հիմնական ուժը՝ ապրող, շնչող ու զարգացող մեր արդի Հայաստանի Հանրապետությունն է Խորհրդային եղբայրական Հանրապետությանց մեծ ընտանիքով զորացած ու ապահովված: Այս իրողութենեն բնականորեն կիետնի, թե մեր արդար սպասումներու ապագա կենսագործումը անհրաժեշտորեն կթելադրե մեզ՝ իրապաշտորեն խորիի, թե հայ դատի ի նպաստ ամեն մտածում և ամեն աշխատանք պետք է հիմնվի արդի իրական հայրենիքի հետպետե առավել կորացման վեմին վրա: Առանց արդի Հայաստանի կենդանի իրողության և հայրենական ուժականության, պայքարը հանուն հայ դատի կորունցնե իր իմաստը:

ՀԱՐՑ—Պահանջատեր հայությունը Զեզ կսիրե կոչել «Խորիմյաններու արժանավոր հաջորդք»: Անհրաժեշտ ինչ նախապատրաստությամբ ու գործելակերպի որդեգրումով հայությունը, մասնավորաբար հայ սփյուռքը կրնածառայել հայկական ցեղասպանության համաշխարհային ճանաչումին և դատապարտման, բռնախլված իրավունքներու ձեռքբերումին:

ՊԱՏԱՍԽԱՆԱՆ—Օսմանյան կապսության 1915-ին գործած ցեղասպանությունը Արևմտահայաստանի տարածքի վրա, համաշխարհային պատմության ամենամռայլ էշերեն մեկն է, որ պետք է դատապարտվի համայն մարդկության կողմեն: Միացյալ Ազգերու Կազմակերպության կողմեն ճանաչումը և դատապարտումը 1915-ի ցեղասպանության թե՛ արդար է, թե՛ բարոյական է և թե՛ անհրաժեշտ վճիռ, արթուն պահելու համար աշխարհի խիզճը, որ չկրկնվին նման ողբերգություններ ոչ մեկ տեղ, ոչ մեկ ժամանակ:

ՀԱՐՑ—Մայր հայրենիքի պետությունը և Խորհրդային Միությունը ցարդ բուռն կերպով դատապարտած են հայ ժողովուրդի ցեղասպանությունն ու արևմտահայության հայրենավորկումը: Այդ պաշտոնական կեցվածքը փոփոխություն կրա՞ծ է:

ՊԱՏԱՍԽԱՆԱՆ—Ես կկարծեմ, թե ոչ մեկ էական փոփոխություն չի դրսեվորվիր: Խորհրդային Միության քաղաքականության հիմնական սկզբունքներեն մին՝ պաշտպանությունն է ազգություններու արդար իրավանց, պաշտպանությունն է բռնադատված և իրավակրկված զանգվածներու:

Զեր դրած հարցին հստակ պատասխանն է՝ վերջին տասնամյակին մանավանդ լուս տեսած բազմաթիվ հատորները, նվիրված հայ պատագրական շարժման և հայոց հերոսական ինքնապաշտպանության մարտերուն անցյալ դարու վերջերուն և ցեղասպանության տարիներուն: Նաև վերջին տարիներու և մինչև օրս շարունակվող Երևանի հեռուստատեսության հաճախակի հաղորդումները նվիրված նույնպես հայ պատագրական մարտերուն և հերոսներուն: Քանի մը օր առաջ հեռուստացույցը մեկ ժամ նվիրած էր Պոլսո Պապա Ալիի դեպքերուն, դրվատելով կազմակերպիչներու խիզախությունը ընդդեմ օսմանյան բռնակալներու:

ՀԱՐՑ—Միջին Արևելքի մեր գաղութներու դրությունը և հոնկե կատարվող արտագաղթը Մայր Աթոռին մտահոգությունը կազմած է: Մնայուն այս ուշադրության մեկ լավագույն վկայությունը կազմեցին Եղեռնի 70-ամյակին

առթիվ, շրջանի շարք մը տերությանց ղեկավարներուն Զեր Սրբության հղած ուղերձները:

Անշուշտ պետք է մնալ ինքնավստահ, որ Մայր Աթոռը այսուհետև ալ իր հոգատար թները կշարունակե պահել տարածուն այդ ամենեն ավելի նեցուկի և օժանդակության կարոտ գաղութներուն վրա, հատկապես Լիբանանի, որ սիյուռքահայության կեդրոն նկատված է իրավամբ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՆ—Մայր Աթոռիս մշտական մտահոգության առարկան է Մերձավոր Արևելքի և ի մասնավորի Լիբանանի հայության տագնապափի վիճակը և ոչ միայն Մայր Աթոռիս, այլև համայն հայրենաբնակ մեր ժողովուրդինը, որովհետև ձեր շրջանի հայությունը իր եկեղեցական, կրթական և մշակութային հայաշունչ և հայակամ կազմակերպություններով կիանդիսանա հարազատ շարունակությունը մայր հայրենիքի հայության: Մեր աղոթքն է, որ շատ մոտ ապագային Մերձավոր Արևելքի հայ զաղութները վերագունեն իրենց երբեմնի խաղաղ ու բարգավաճ կյանքը: Մանավանդ եղբայրական Լիբանանի համար է մեր աղոթքը, որպեսպի վերջ գտնեն ներքին համայնքային անհասկացողությունները, և ձեր դրախտանման երկիրը նոր վերջածնունդ ապրի համերաշխ գործակցությամբ մահմեդական ու քրիստոնյա համայնքներու, որուն համար գիտենք, թե ճիզ ու եռանդ չի խնայեր Լիբանանի հայ համայնքը, տոգորված լիբանանյան իրավ հայրենասիրությամբ:

Մայր Աթոռու իր աղոթքներով առ բարին Աստված, պիտի շարունակե նաև սրտցավ ու հոգատար մնալ հայ համայնքի կրթական և մշակութային հաստատությանց գոյատեման ու ծաղկման:

ՀԱՐՑ—Քանի որ կատունվինք 1986 տարվան սեմին, ի՞նչ պիտի բարեմայթեիք ընդհանրապես հայության և մասնավորապես Զեր տարագիր զավակներուն՝ հայկական բոլոր գաղութներու մեր ժողովուրդին, և բոլոր ժողովուրդներուն ու աշխարհին առհասարակ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՆ—Մեր վերջին խոսքն ու մաղթանքը պետք է ըլլա՝ խաղաղության պատգամ մը, որ մեզի կուգա մեր սուրբ Ավետարանեն. «Խաղաղութիւն հեռաւորաց, խաղաղութիւն մերձաւորաց»: Այս իմաստով, ավելի քան այժմեական է Քրիստոսի փրկագործ Ավետարանը: Կիավատամ նաև, որ այս է գերագույն իդլն ու սպասումը աշխարհի բոլոր ազգություններու անխտիր: Կմնա, որ նաև պետությանց պատասխանառու առաջնորդները իրավ մարդասիրությամբ ականջ դնեն բազմություններու սրտի տրոփին և իրենց միջև անհասկացողությունները լուծեն խաղաղ ձանապարհներով Միացյալ Ազգերու Կազմակերպության հովանիին ներքե, որ այդ նպատակավ ծնունդ առավ վերջին պատերազմեն հետո՝ որպես ուխտ աշխարհի խաղաղության պահպանման:

Մենք անդադար ու բարձրագաղակ տևապես պիտի մնանք աղոթող և գործող վասն խաղաղ գոյակցության ազգություններու նաև այն գիտակցությամբ, որ մեր վերածնած մայր երկրի Հակատագիրը, մեր ազգի գոյատեմը պիտի երաշխավորվին միմիայն խաղաղության գաղափարի հայթանակով: Անցյալի մեր ազգային ողբերգություններու իրամայականն է այս, ամեն բանե վեր:

Կմաղթեմ, որ ձեր «Արարատ»-ը մշտապես իր արթուն հայացքը հավերժական Արարատին հառած, ջահակիրը մնա խաղաղության լուսին և պաշտպանը Մայր Հայաստանի լուսներուն: